ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Մաս III

Երևան 2011

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՄԱՍ III

2011

Ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող փաստաթղթերի սույն ընտրանին լույս է տեսել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության հետ սերտ համագործակցությամբ:

Սույն հրապարակման մեջ տեղ են գտել ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող դրույթներ ՀՀ օրենսդրությունից և միջազգային փաստաթղթերից:

Ընտրանին ընդգրկում է փաստաթղթերի՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրած պաշտոնական թարգմանություններ, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ոչ պաշտոնական թարգմանություններ: Այս առնչությամբ յուրաքանչյուր փաստաթուղթ համապատասխան նշում է պարունակում:

Խմբագիր՝ Աղավնի Հարությունյան

ISBN: 978-92-9235-877-8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

ՄԱՍ III

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.....9

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (քաղվածքներ).....9
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (քաղվածքներ).....10
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (քաղվածքներ).....16
4. Հայաստանի Հանրապետության օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին (քաղվածքներ).....17
5. Հայաստանի Հանրապետության օրենքը լեզվի մասին (քաղվածքներ).....19
6. Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին.....23
7. Հայաստանի Հանրապետության օրենքը գովազդի մասին (քաղվածքներ).....35
8. Հայաստանի Հանրապետության օրենքը երեխայի իրավունքների մասին (քաղվածքներ).....35
9. Հայաստանի Հանրապետության օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (քաղվածքներ).....36
10. Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին (քաղվածքներ).....37
11. Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին (քաղվածքներ).....40
12. Հայաստանի Հանրապետության օրենքը հասարակական կազմակերպությունների մասին (քաղվածքներ).....40
13. Հայաստանի Հանրապետության օրենքը կուսակցությունների մասին (քաղվածքներ).....41
14. Հայաստանի Հանրապետության օրենքը բարեգործության մասին (քաղվածքներ).....43
15. Հայաստանի Հանրապետության օրենքը մշակութային օրենսդրության հիմունքների մասին (քաղվածքներ).....43
16. Հայաստանի Հանրապետության օրենքը հավաքների ազատության մասին (քաղվածքներ).....44
17. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի

կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին (քաղվածքներ).....45
18. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում լեզվական քաղաքականության պետական ծրագիրը հաստատելու մասին (քաղվածքներ).....46
19. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի նմուշները, այդ ձևաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին (քաղվածքներ).....49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային փոքրամասնությունների իրավունքներն ամփոփ ներկայացնող սույն ընտրանին պարունակում է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներ և միջազգային փաստաթղթեր (կամ քաղվածքներ): Ժողովածուն ներառում է նաև Միավորված ազգերի կազմակերպության[1] (այսուհետև՝ ՄԱԿ), Եվրոպայի խորհրդի[2] (այսուհետև՝ ԵԽ), ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության[3] (այսուհետև՝ ԵԱՀԿ) կողմից ընդունված դաշնագրերը, կոնվենցիաները, հռչակագրերը, հանձնարարականները և այլ փաստաթղթեր:

Սույն ժողովածուի մեջ ներառվել են այն միջազգային պայմանագրերը, որոնք անկախությունից ի վեր վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Մյուս փաստաթղթերը՝ հռչակագրերը, բանաձևերն ու հանձնարարականները, չլինելով պարտադիր կիրառելիության իրավունքի նորմեր, այդուհանդերձ, որպես չափորոշիչներ են ծառայում վերոհիշյալ միջազգային կազմակերպություններին անդամակցող բոլոր երկրների համար:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը կազմում են ՀՀ օրենսդրության անբաժանելի մասը, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ «միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:

Սույն ընտրանու մեջ ներառված են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հետևյալ միջազգային փաստաթղթերը `

ՄԱԿ	• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ., • Կոնվենցիա ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին, 1948թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ.-ի հունիսի 23-ից, • Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1965թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի

[1] Հայաստանի Հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է 1992 թվականի մարտի 2-ից:

[2] Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է 2001 թվականի հունվարի 25-ից:

[3] Մինչև 1995թ. կազմակերպությունը կոչվում էր Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, ուստի սույն հրատարակության մեջ մինչև 1995թ. վերաբերող հղումներում օգտագործվում է ԵԱՀԽ հապավումը, դրանից հետո՝ ԵԱՀԿ: Հայաստանի Հանրապետությունը ԵԱՀԿ մասնակից պետություն է 1992 թվականի հունվարի 30-ից:

	մեջ է մտել 1993 թ.-ի հուլիսի 23-ից, • Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1966թ., և դաշնագրին կից կամընտիր արձանագրություն, 1966թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 1993 թ.-ի սեպտեմբերի 23-ից, • Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, 1966թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ.-ի դեկտեմբերի 13-ից, • Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, 1989թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ.-ի հուլիսի 22-ից, • Հռչակագիր ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին, 1978թ., • Հռչակագիր կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1981թ., • Հռչակագիր ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին, 1992թ., • Համընդհանուր հռչակագիր մշակութային բազմազանության մասին, 2001թ., • Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, Մարդու իրավունքների մասին 2005/79 բանաձև, 2005թ.:
Եվրոպայի խորհուրդ	• Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 1950թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ.-ի ապրիլի 26-ին, • Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա և բացատրական զեկույց, 1992թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թ.-ի մայիսի 1-ին, • Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, 1995թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 1-ին, • Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, 1996թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 21-ին, • ԵԽԽՎ 1201 հանձնարարական Մարդու

	իրավունքների եվրոպական կոնվենցիայի ազգային փոքրամասնությունների իրավունքների լրացուցիչ արձանագրության վերաբերյալ, 1993թ., • ԵԽԽՎ 1353 հանձնարարական, 1998թ., Բարձրագույն կրթության մատչելիությունը փոքրամասնությունների համար, • ԵԽԽՎ 1383 հանձնարարական, 1998թ., Լեզվական բազմազանեցումը, • ԵԽԽՎ 1492 հանձնարարական, 2001թ., Ազգային փոքրամասնությունների իրավունքները, • ԵԽԽՎ 1623 հանձնարարական, 2003թ., Ազգային փոքրամասնությունների իրավունքները, • ԵԽԽՎ 1735 հանձնարարական, 2006թ., «Ազգ» հասկացությունը:
ԵԱՀԿ	• Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի, 1975թ., Հայաստանը ստորագրել է փաստաթուղթը 1992 թվականի հունվարի 30-ին, • Մադրիդի եզրափակիչ փաստաթուղթ, 1983թ., • Վիեննայի եզրափակիչ փաստաթուղթ, 1989թ., • ԵԱՀԽ մարդկային ուղղությանը նվիրված համաժողովի՝ Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը, 1990թ., • Փարիզի խարտիան նոր Եվրոպայի համար, 1990թ., • ԵԱՀԽ ազգային փոքրամասնությունների հարցերով փորձագետների հանդիպման զեկույց, Ժնև, 1991թ., • ԵԱՀԽ մարդկային ուղղությանը նվիրված համաժողովի՝ Մոսկվայի հանդիպման փաստաթուղթ, 1991թ., • ԵԱՀԽ Հելսինկյան փաստաթուղթ. փոփոխությունների մարտահրավերները, 1992թ., • Բուդապեշտի եզրափակիչ փաստաթուղթ. դեպի իրական գործընկերություն նոր դարաշրջանում, 1994թ., • Լիսաբոնի փոստաթուղթ, 1996թ., • Ստամբուլի փաստաթուղթ, 1999թ., • Նախարարների խորհրդի՝ Մասստրիխտի փաստաթուղթ, 2003թ., • Հաագայի հանձնարարականներ փոքրամասնությունների կրթական իրավունքների վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1996թ., • Օսլոյի հանձնարարականներ

	փոքրամասնությունների լեզվական իրավունքների վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1998թ., • Լունդի հանձնարարականներ հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1999թ., • Ուղենիշներ ընտրական գործընթացներում ազգային փոքրամասնությունների մասնակցությունը խթանելու վերաբերյալ, 2001թ., • Հեռարձակվող լրատվամիջոցներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման ուղենիշներ և բացատրագիր, 2003թ., • Հանձնարարականներ բազմէթնիկ հասարակությունում ոստիկանական գործունեության վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 2006թ.:

ԳԼՈՒԽ 4.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(քաղվածքներ)

(Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով: Սահմանադրության փոփոխություններն ընդունվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով և ուժի մեջ մտել 2005 թվականի դեկտեմբերի 6-ին)

Հայ ժողովուրդը հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

ԳԼՈՒԽ 2
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 14.1.

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 26.

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության,

առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Հոդված 40.

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Հոդված 41.

Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
(քաղվածքներ)

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 7.
ՄԱՐԴՈՒ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 16.
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 112. ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԾԱՆՐ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ

1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որեւէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաեւ կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է

հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) (112-րդ հոդ. 2-րդ մ. 3-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն օրենք)

4) առանձին դաժանությամբ,

5) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

6) մի խումբ անձանց կամ, կազմակերպված խմբի կողմից,

7) շահադիտական դրդումներով.

8) ահաբեկչությամբ զուգորդված,

9) խուլիգանական դրդումներով,

10) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

11) բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով զուգորդված,

12) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

13) տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով,

14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

(112-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն օրենք)

Հոդված 113. ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՋԻՆ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ

1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որեւէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար եւ չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետեւանքներ, բայց առաջացրել է առողջության տեւական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝ պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

4) շահադիտական դրդումներով,
5) առանձին դաժանությամբ,
6) խուլիգանական դրդումներով,
7) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Հոդված 119. ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ

1. Խոշտանգումը՝ ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ եւ 113-րդ հոդվածներով նախատեսված հետեւանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են՝
1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
3) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաեւ առեւանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ,
4) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
5) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
6) առանձին դաժանությամբ,
7) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 19.
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 143. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից

չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 160. ԽՂՃԻ ԿԱՄ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ

Կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը կամ կրոնական ծեսերի կատարմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:
(160-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն օրենք)

ԲԱԺԻՆ 8.
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 21.
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 185. ԳՈՒՅՔԸ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ

1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը՝

1) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,

2) խոշոր չափերի վնաս է պատճառել,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավորի կողմից իր ծառայողական կամ հասարակական պարտքը կատարելու հետ,

4) կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված

գործողությունը, որը՝

1) առանձնապես խոշոր չափերի վնաս է պատճառել,

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

3) առաջացրել է պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

(185-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն օրենք)

ԲԱԺԻՆ 9.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 23.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 226. ԱԶԳԱՅԻՆ, ՌԱՍԱՅԱԿԱՆ ԿԱՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԹՇՆԱՄԱՆՔ ՀԱՐՈՒՑԵԼԸ

1. Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով,

2) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

4) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

(226-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 25.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 265. ԴԻԱԿԸ ԿԱՄ ԹԱՂՄԱՆ ՎԱՅՐԵՐՆ ԱՆԱՐԳԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ

1. Դիակն անարգանքի ենթարկելը կամ թաղման վայրերը, մահացածներին թաղելու կամ նրանց հիշատակի հետ կապված ծիսակատարությունների համար նախատեսված գերեզմանների վրա եղած շինությունները կամ առարկաները ոչնչացնելը, վնասելը կամ պղծելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից,

2) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի շարժառիթով,

3) գերեզմաններում գտնվող կամ դրանց վրա եղած առարկաները հափշտակելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(265-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն օրենք)

ԲԱԺԻՆ 13.
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 33.
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 392. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային եւ պարբերական մահապատիժներ կիրառելը, մարդկանց առեւանգելը, ինչին հետեւում է նրանց անհետանալը, խոշտանգելը կամ դաժան գործողությունները, որոնք կատարվում են ըստ քաղաքացիական բնակչության ռասայական, ազգային, էթնիկական պատկանելության, քաղաքական հայացքների եւ դավանանքի՝ պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

Հոդված 393. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցեղասպանությունը, այսինքն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որեւէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մանկածնությանը խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը, բռնությամբ վերաբնակեցնելը կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը՝պատժվում են ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:
(393-րդ հոդվածը փոփ. 05.12.06 ՀՕ-256-Ն օրենք)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
(քաղվածքներ)

Ընդունված Ազգային ժողովի կողմից
1998 թվականի մայիսի 5-ին

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԱՆՁԻՆՔ

(ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ)
ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Հոդված 20. Քաղաքացու իրավունակությունը

1. Քաղաքացիական իրավունքներ ունենալու եւ պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

2. Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին եւ դադարում է մահվամբ:

Հոդված 22. Քաղաքացու անունը

1. Քաղաքացին իրավունքներ եւ պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որը ներառում է նրա ազգանունը եւ անունը, նրա ցանկությամբ՝ նաեւ հայրանունը:

Օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ քաղաքացին կարող է օգտագործել կեղծանուն (մտացածին անուն):

2. Քաղաքացին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխել իր անունը: Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք

բերված նրա իրավունքներեհո եւ պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար:

Քաղաքացին պարտավոր է իր պարտապաններին եւ պարտատերերին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու կրում է իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետեւանքով առաջացած վնասների ռիսկը:

Անունը փոխած քաղաքացին իրավունք ունի պահանջել, որպեսզի իր հաշվին համապատասխան փոփոխություններ մտցվեն իր նախկին անվամբ ձեւակերպված փաստաթղթերում:

3. Ծննդյան ժամանակ քաղաքացու ստացած անունը, ինչպես նաեւ նրա անվան փոփոխությունը ենթակա են գրանցման՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման
համար սահմանված կարգով:

4. Այլ անձի անվամբ իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերել չի թույլատրվում:

5. Քաղաքացու անվան ապօրինի օգտագործմամբ նրան պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն օրենսգրքին համապատասխան:

Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը շոշափող եղանակով կամ ձեւով նրա անունն աղավաղելու կամ օգտագործելու դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 19 հոդվածով նախատեսված կանոնները:

4. ՀՀ ՕՐԵՆՔԸ
ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգեւոր զարթոնքը, նրա դարավոր հոգեւոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգեւոր կյանքի շինության ու ազգապահպանման կարեւոր պատվար, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների սկզբունքներով եւ հավատարիմ լինելով քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18 հոդվածի դրույթներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունում է սույն օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպության մասին:

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի եւ կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր:

Հոդված 2.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները օրենքի առջեւ հավասար են քաղաքացիական, քաղաքական, հասարակական, տնտեսական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից:

Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 3.

Քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին եւ արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս:

Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը եւ կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունը եւ բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

ԳԼՈՒԽ 2.
ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հոդված 5.

Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետեւյալ պայմաններին.

ա) չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին.

բ) հիմնվում է պատմականորեն կանոնացված որեւէ սուրբ գրքի վրա.

գ) իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ.

դ) զերծ է նյութապաշտությունից եւ ուղղված է դեպի հոգեւոր ոլորտները.

ե) ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից:

Սույն պայմանները (բացի „ա„ կետում նշվածից) պարտադիր չեն միայն ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների համար՝ իրենց ազգային դավանանքով:
(փոփ. 09.09.97 օրենք)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից "30" մարտի 1993թ. Հ.Ն-0773-I

Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության եւ կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Հոդված 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը եւ տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության եւ կետադրության կանոնարկման սկզբունքներին մշակմանը:
(1-ին հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-162-Ն օրենք)

Հոդված 1.1. ՕՐԵՆՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրենքում գործածվում են հետեւյալ հիմնական հասկացությունները. պետական լեզվաքաղաքականություն՝ լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը. պետական լեզու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված եւ պետության հոգածությամբ ու հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու.

պաշտոնական լեզու՝ հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին եւ հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու.

պաշտոնական խոսք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (անկախ կարգավիճակից) ի պաշտոնե հրապարակային խոսք.

լեզվավիճակ՝ համաժամանակյա կտրվածքով ներկայացվող լեզվական իրողությունների, զարգացման միտումների եւ երեւույթների ամբողջականություն.

լեզվական հարաբերություններ՝ պետական լեզվի գործառույթներով պայմանավորված՝ լեզվի գործածության ձեւեր, որոնք իրականացվում են պետության ներսում եւ այլ պետությունների ու միջազգային կառույցների միջեւ առկա փոխհարաբերություններում.

գրական հայերենի կանոնարկում՝ լեզվի հիմնական քերականական օրենքների, բառակերտման եւ տերմինաբանության միջոցով բառապաշարի հարստացման եւ քերականական նոր կանոնների ստեղծման գործընթաց.

լեզվական իրավունք՝ քաղաքացու, հանրության, պետական կամ հասարակական կառույցների լեզվական գործառնության նկատմամբ պետության սահմանած իրավունքներ.

լեզվական պարտականություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ հաստատությունների կողմից հանրային կյանքի բոլոր ոլորտներում լեզվական քաղաքականությունից եւ լեզվական հարաբերություններից բխող սկզբունքների պահպանում.

գործավարություն՝ փաստաթղթերի ստեղծման, ձեւավորման, շրջանառության ապահովման եւ պահպանման գործընթաց, որը ներառում է կազմակերպակարգադրական (կառավարման եւ վարչական աշխատանքի կազմակերպումն ապահովող), անհատական, նորմատիվ, տեխնիկական, գիտատեխնիկական, նախագծահաշվային, ուսումնամեթոդական, ֆինանսահաշվապահական, գործարքային, հաշվետու-

վիճակագրական, առեւտրային, տեղեկատվական, բացատրական, հրահանգային, տեխնոլոգիական, նամակագրական-թղթակցային փաստաթղթերի ստեղծումը եւ (կամ) ձեւավորումը, շրջանառության ապահովումն ու պահպանումը.

ցուցանակ՝ կազմակերպության որեւէ հատվածում տեղադրված հրապարակային գրվածք, որը պարունակում է տեղեկույթ կազմակերպության (ֆիրմայի) անվանման եւ (կամ) կազմակերպաիրավական ձեւի եւ (կամ) ապրանքանշանի եւ (կամ) տվյալ աշխարհագրական եւ (կամ) վարչական եւ (կամ) քաղաքաշինական եւ (կամ) տնտեսական եւ (կամ) հասարակական եւ (կամ) միավորի անվանման եւ այլնի մասին.

պետական վերահսկողության ենթակա փաստաթուղթ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների եւ կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից) գործունեությանն առնչվող փաստաթուղթ:

(1.1-ին հոդվածը լրաց. 23.05.11 ՀՕ-162-Ն օրենքով եւ ուժի մեջ է 17.07.11 թվականից)

Հոդված 2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են "Հանրակրթության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը եւ հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննություններն ու ուսուցումը իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

(2-րդ հոդվածը փոփ. 03.05.05 ՀՕ-95-Ն, 22.12.10 ՀՕ-31-Ն օրենքներ)

Հոդված 3. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պաշտոնատար անձինք եւ սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն գրական հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել գրական լեզվի անաղարտությունը:

(3-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-162-Ն օրենք)

Հոդված 4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների եւ քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները պարտավոր են.

ա) գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները.

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների եւ պաշտոնական ու հանրային միջոցառումների, հեռուստառադիոհաղորդումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը.

գ) ցուցանակները, ձեւաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձեւավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել
հայերենով:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը,

ձեւաթղթերը, կնիքները ձեւավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:
(4-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-91-Ն, 23.05.11 ՀՕ-162-Ն օրենքներ)

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(քաղվածքներ)

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
"23" հոկտեմբերի 1995թ. Ն-041-I
ՀՀ նախագահի առարկություններով եւ առաջարկություններով
ընդունված է Ազգային Ժողովի կողմից
"06" նոյեմբերի 1995 թ. Ն-061-I

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարեցման կարգը սահմանվում է սույն օրենքով: Անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետեւանքով:

Յուրաքանչյուր անձ, օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից կամ այն փոխելու իրավունքից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից:

Քաղաքացիությունը փոխելը կարգավորում է սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն:
(1-ին հոդվածը փոփ. 26.02.07 ՀՕ-75-Ն օրենք)

Հոդված 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերից:

Եթե վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի են սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

Հոդված 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, իսկ մինչեւ 16 տարին լրանալը՝ նաեւ ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը:

(4-րդ հոդվածը փոփ. 26.02.07 ՀՕ-75-Ն օրենք)

Հոդված 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն այլ պետությանը հանձնելն արգելվում է:

Հոդված 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելը ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում:

Ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքինին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխմանը:

Հոդված 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հանրապետությունից դուրս օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունից եւ հովանավորությունից:

Հայաստանի Հանրապետությունը նրա դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունները եւ դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաեւ՝ միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանն ու միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 8. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Օտարերկրյա քաղաքացի է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը, որն ունի այլ պետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձը, որն այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի, համարվում է քաղաքացիություն չունեցող անձ:

Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը եւ չի խոչնդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելուն:

Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Հոդված 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1) քաղաքացիության ճանաչմամբ.

2) ծննդով.

3) քաղաքացիություն ստանալու միջոցով.

4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.

5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

7) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Հոդված 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչեւ Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում.

2) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար.

(2-րդ կետը խմբ. 12.10.99 թիվ ՀՕ-5, 20.03.02 ՀՕ-313, 18.11.03 ՀՕ-33-Ն, 06.04.10 ՀՕ-34-Ն օրենքներ)

3) Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող ծագումով հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն:

(10-րդ հոդ. փոփ. 18.11.97, 20.03.01 ՀՕ-157, 26.02.07 ՀՕ-75-Ն օրենքներ)

Հոդված 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 12. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Հոդված 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած եւ գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով եւ

3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1) որն ամուսնացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա.

2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար.

3) որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ.

4) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, ինչպես նաեւ երկրորդ մասով սահմանված պահանջների պահպանման՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է շնորհվել Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը եւ բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, պատվին եւ բարի համբավին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը տալիս է հետեւյալ երդումը. "Ես՝ (անուն-ազգանուն), դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, երդվում եմ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը Պարտավորվում եմ հարգել Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը եւ սովորույթները:":

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը ստորագրում է երդման տեքստը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի մշակած Հայաստանի Հանրապետության օրենսդրության առանձնահատկությունների մասին տեղեկատվական ձեռնարկը:
(13-րդ հոդվածը փոփ. 26.02.07 ՀՕ-75-Ն օրենք)

Հոդված 13.1. ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաեւ այլ պետության (երկրների) քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Սույն նորմը տարածվում է նաեւ 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի

Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները եւ կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

Սույն հոդվածի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:
(13.1-րդ հոդվածը լրաց. 26.02.07 ՀՕ-75-Ն օրենք)

Հոդված 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձի քաղաքացիությունն, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնվել, եթե բացակայում են սույն օրենքի 13 հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը, եւ եթե նա չի զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

Հոդված 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումն իրականացվում է ներգաղթի եւ օրենքով սահմանված այլ դեպքերում՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

ԳԼՈՒԽ 3
ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՄ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հոդված 16. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչեւ 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչեւ 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, եւ առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հոդված 17. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչեւ տասնչորս տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, նրանց մինչեւ տասնչորս տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, եւ առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հոդված 18. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

1) առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը.

2) երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, եւ առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը.

3) երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

Հոդված 19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

Հոդված 20. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել սույն օրենքին համապատասխան:

Հոդված 21. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխան, որի նկատմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից:

Հոդված 22. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼԻՍ

Ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից զրկվելու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

4) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Հոդված 24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼԸ

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից եւ ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

1) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

2) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած եւ կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին.

4) նա ունի պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ:

Հոդված 25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԵԼԸ

Անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից կարող է զրկվել, եթե նա՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերել սույն օրենքի 13 հոդվածին համապատասխան եւ, մշտապես բնակվելով արտասահմանում, յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն:

ԳԼՈՒԽ 5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 26. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Հանրապետության Նախագահն իր հրամանագրով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը:

Հոդված 27. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը կազմավորում է Հանրապետության Նախագահը:

Քաղաքացիության հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատում է Հանրապետության Նախագահը:

Հոդված 28. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարությունը՝

1) ապահովում է կառավարության, նախարարությունների, կառավարման այլ մարմինների ակտերի համապատասխանեցումը սույն օրենքին.

2) սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի ձեւակերպման եւ դրանք քաղաքացիներին հանձնելու կարգը.

3) սահմանում է քաղաքացիության ձեռքբերման եւ դադարեցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու նմուշները.

4) ընդունում է սույն օրենքի կիրարկումն ապահովող որոշումներ:

Կառավարությունն իրավասու մարմինների միջոցով՝

1) ընդունում է քաղաքացիության վերաբերյալ դիմումներ եւ այլ փաստաթղթեր, ստուգում դրանց իսկությունը եւ հիմնավորվածությունը.

2) քաղաքացիության վերաբերյալ դիմումները, միջնորդությունները եւ այլ փաստաթղթերը համապատասխան եզրակացություններով ուղարկում է Հանրապետության Նախագահին.

3) Հանրապետության Նախագահին առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին.

4) կատարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառումը.

5) սույն օրենքին համապատասխան պարզում է անձանց պատկանելությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը:

ԳԼՈՒԽ 6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները եւ միջնորդությունները ներկայացվում են գրավոր:

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկվում են մեկամյա ժամկետում: Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 30. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄԸ

Պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիության հարցերով դիմումները չընդունելը, քննարկման ժամկետները խախտելը, ինչպես նաեւ նրանց այլ անօրինական գործողությունները կարող են գանգատարկվել դատական կարգով:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
" 30 " ապրիլի 1996 թ.

Հոդված 8. ԳՈՎԱԶԴԻ ՊԱՏՇԱՃՈՒԹՅՈՒՆԸ

Արգելվում է այն գովազդը, որում խախտվում է գովազդի պատշաճությունը, այն է՝

ա) վարկաբեկում է բարոյականության համընդհանուր եւ ազգային նորմերը.

բ) պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական եւ այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ եւ պատկերներ.

գ) ուղղակի կամ անուղղակի ձեւով արատավորում կամ անհարգալից վերաբերմունք է արտահայտում պետական խորհրդանիշերի (զինանշանի, դրոշի, օրհներգի, դրամանիշի եւ այլն) նկատմամբ.

դ) վարկաբեկում է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ արտադրական, առեւտրային կամ այլ գործունեությունը, մասնագիտությունը, ապրանքատեսակն ու այլն:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
29 մայիսի 1996 թ.

Սույն օրենքը սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների եւ քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաեւ երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները եւ կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:
(նախաբանը խմբ. 19.03.02 ՀՕ-316 օրենք)

ԳԼՈՒԽ II
ԵՐԵԽԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 18. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգեւոր արժեքներին եւ համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:

Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսեւորելու իրավունք:

Երեխայի ստեղծագործական հնարավորությունների զարգացման նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի եւ տեսաֆիլմերի, հեռուստահաղորդումների թողարկումը, մանկական թերթերի, ամսագրերի, գրքերի հրապարակումը, ապահովում դրանց մատչելիությունը:

Արգելվում է երեխայի առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության եւ դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության եւ գրականության տարածումը:

(18-րդ հոդվածը փոփ. 18.11.09 ՀՕ-209-Ն օրենք)

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
11 նոյեմբերի 1998 թ.

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 7. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ, ՌԱՍԱՅԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄԸ

Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում արգելվում է քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը:

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 5. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն գրական հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը:

2. Օտար լեզուների ուսուցման նպատակով կազմակերպվող հեռուստառադիոդասընթացները, ինչպես նաեւ երգերն ու երաժշտական այլ ժանրերի ստեղծագործությունները կարող են եթեր հեռարձակվել առանց հայերեն թարգմանության:

3. Արգելվում է լիցենզավորված անձանց կողմից հեռուստառադիոընկերությունների անվանումները, ազդականշերը եւ այլ ելքային տվյալները միայն օտար լեզուներով օգտագործելը: Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում արտերկրի համար հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների եւ ազգային փոքրամասնությունների լեզուներով տրվող հաղորդումների վրա:

ԳԼՈՒԽ 3
ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 22. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել՝

1) իշխանությունը բռնի զավթելու, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու եւ տապալելու քարոզչության,

2) ազգային, ռասայական եւ կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու,

3) պատերազմ քարոզելու,

4) քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելու,

5) պոռնկագրություն տարածելու,

6) բռնության եւ դաժանության պաշտամունք պարունակող կամ քարոզող հաղորդումներ հեռարձակելու նպատակներով:

Հոդված 23. ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Հեռուստառադիոընկերություններն արբանյակային հեռարձակում կարող են իրականացնել համապատասխան արբանյակային գործակալության հետ պայմանագրի առկայության դեպքում: Հեռուստաընկերությունն արբանյակային հեռարձակման մասին գրավոր տեղեկացնում է Ազգային հանձնաժողովին հեռարձակման համար նախատեսված օրվանից հինգ աշխատանքային օր առաջ:

ԳԼՈՒԽ 4
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 26. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի եւ պատմության, մարզական, ժամանցային եւ հանրության համար կարեւոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:

Հանրային հեռուստառադիոընկերությունը գործում է սույն օրենքին, իր կանոնադրությանը եւ Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերին համապատասխան:

2. Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստահաղորդումների արտադրության եւ հեռարձակման բնագավառում գործունեությունն իրականացնում է Հանրային հեռուստաընկերությունը, իսկ ռադիոհաղորդումների բնագավառում՝ Հանրային ռադիոընկերությունը: Հանրային հեռուստաընկերության եւ Հանրային ռադիոընկերության ղեկավարման մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է:

3. Հանրային հեռուստառադիոընկերությամբ հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում են այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի համաձայնությամբ՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը կամ այլ հեռուստառադիոընկերություններ:

4. Հանրային հեռուստառադիոընկերությունը ղեկավարվում է օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով եւ ապահովում է խոսքի, խղճի ու ստեղծագործության ազատություն:

5. Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է՝

1) օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին.

2) ապահովել հեռարձակվող հաղորդումների թեմատիկ, բովանդակային բազմազանությունը հնարավոր հաղորդաշարերի եւ հաղորդումների տեսակների տեսքով.

3) մշակել եւ իրականացնել ծրագրային քաղաքականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենահարմար եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը,

բ. հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր եւ հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը,

գ. իր ծրագրերում ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական եւ լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով,

դ. եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի եւ հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչեւ 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչեւ 1 ժամը: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերը եւ հեռուստահաղորդումները պետք է ուղեկցվեն հայերեն լուսագրով:

6. Հանրային հեռուստառադիոընկերությունում՝

1) առեւտրային գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր հաղորդումների յոթ տոկոսը.

2) հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը եւ նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածից դուրս նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչական հաղորդումների առկայությունն արգելվում է.

3) Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության պաշտոնական հաղորդագրությունների (տեղեկատվության) տեւողությունը նրանցից յուրաքանչյուրի համար մեկ օրվա ընթացքում չի կարող գերազանցել 3 րոպեն.

7. Հանրային հեռուստառադիոընկերության աշխատակիցների գործադուլի ժամանակ վերջիններս պարտավոր են ապահովել լրատվական ծրագրերի օրական առնվազն 2 թողարկում՝ առավոտյան եւ երեկոյան:

8. Հանրային հեռուստաընկերության եւ Հանրային ռադիոընկերության կանոնադրությունները հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է Հայաստանի Հանրապետության
Նախագահի առարկությամբ
2001 թվականի հուլիսի 24-ին

Հոդված 20.

Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները եւ հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:
(20-րդ հոդ. (նախկին 19-րդ հոդված) փոփ. 29.09.01 ՀՕ-228 օրենք)

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին

Հայաստանի Հանրապետությունը, կարեւորելով քաղաքացիական հասարակության զարգացումը, սույն օրենքով նպատակ ունի նպաստելու հասարակական կազմակերպությունների, որպես իրավաբանորեն կանոնակարգված գործունեություն ծավալող միավորումների, ստեղծմանն ու գործունեությանը:

Հոդված 21. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Պետական լիազորված մարմինը կարող է կազմակերպությունը լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե՝

1) կազմակերպության գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն եւ պատերազմ քարոզելուն.

2) կազմակերպությունը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

3) կազմակերպության հիմնադիրը (հիմնադիրները) կամ լիազորած անձը կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

2. Սույն հոդվածով նախատեսված հիմքերով դատական ընթացակարգը կիրառվում է, եթե անարդյունավետ կամ սպառված են օրենքով պաշտպանվող իրավունքի խախտումը
վերացնելու մյուս միջոցները:

3. Կազմակերպությունը լուծարվում է նաեւ սնանկության հետեւանքով:

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Կուսակցությունը անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որի գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է:

2. Կուսակցության խնդիրներն ու նպատակներն արտացոլվում են նրա կանոնադրությունում եւ ծրագրում, որոնք հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով:

3. Կուսակցություն չի կարող ճանաչվել այն միավորումը, որի
կանոնադրությունը՝

1) թույլատրում է նրանում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ սույն օրենքով

նախատեսված դեպքերի, ինչպես նաեւ օտարերկրյա եւ միջազգային կազմակերպությունների անդամակցությունը.

2) նախատեսում է անձանց անդամակցությունը միայն մասնագիտական, ազգային, ռասայական, կրոնական հատկանիշներով.

3) նախատեսում է այնպիսի անձանց անդամակցությունը, որոնք սույն օրենքին համապատասխան չեն կարող լինել կուսակցության անդամ:
(3-րդ հոդվածը փոփ. 04.12.02 ՀՕ-475-Ն օրենք)

Հոդված 7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ԵՎ ԱՅԼ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

1. Կուսակցությունները կարող են ունենալ խորհրդանշան եւ այլ խորհրդանիշներ, որոնց ճշգրիտ նկարագրությունը պետք է տրված լինի կուսակցության կանոնադրությունում: Կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշներ չեն կարող համընկնել Հայաստանի Հանրապետության դրոշի եւ զինանշանի հետ: Այլ անձինք եւ կազմակերպությունները չեն կարող օգտագործել կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշներ:

2. Որպես կուսակցության խորհրդանշան եւ այլ խորհրդանիշներ չեն կարող օգտագործվել գործող կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում արգելված կազմակերպությունների կամ կուսակցությունների խորհրդանշանները եւ խորհրդանիշները:

3. Կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշներ չպետք է խախտեն քաղաքացիների եւ իրավաբանական անձանց մտավոր սեփականության, ներառյալ՝ ապրանքների եւ դրանց ծագման տեղանունների նկատմամբ նրանց իրավունքը: Արգելվում է այնպիսի խորհրդանշանի եւ (կամ) խորհրդանիշների օգտագործումը, որոնք խեղաթյուրում են Հայաստանի Հանրապետության, այլ պետությունների զինանշանները, վիրավորում մարդկանց հոգեւոր, ռասայական, ազգային զգացմունքները, խախտում բարոյականության հանրաճանաչ նորմերը:

Հոդված 9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Արգելվում է այն կուսակցությունների ստեղծումն ու գործունեությունը, որոնց նպատակները կամ գործունեությունն ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի եւ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը, բռնություն եւ պատերազմ քարոզելուն:

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 5. ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Բարեգործության իրականացման սկզբունքներն են՝
1) սոցիալական արդարության պահպանումը.
2) մարդասիրության ամրապնդումը եւ տարածումը.
3) մարդկային արժանապատվության պահպանումը.
4) սերունդների համերաշխության ամրապնդումը.
5) սոցիալական հասցեականության պահպանումը.
6) սոցիալական խնամառության բացառումը.
7) ազգային խտրականության բացառումը:

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունված է 2002 թվականի նոյեմբերի 20-ին

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 8. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը եւ զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման եւ զարգացման համար պայմանների ստեղծմանը:

ԳԼՈՒԽ II
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հոդված 9. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության մշակութային կյանքին մասնակցելն ու մշակութային գործունեություն իրականացնելը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՄՍԻՆ (քաղվածքներ)

Ընդունվել է 14.04.2011

Հոդված 5. Հավաքների ազատության սահմանափակումների հիմքերը

1. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր), այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (այսուհետ՝ այլ անձանց սահմանադրական իրավունքներ) գերակայում են հավաքի ազատության նկատմամբ:

2. Արգելվում է հավաքների ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնության կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 19. Հավաքն արգելելը

Հավաքն արգելվում է, եթե՝

1) հավաքի նպատակը սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելն է.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

25 դեկտեմբերի 1998 թվականի թիվ 821

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
"25" դեկտեմբերի 1998 թ.

Ելնելով Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգը կատարելագործելու եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը (կցվում է).

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը (կցվում է).

գ) (1-ին կետի գ ենթակետն ուժը կորցրել է 23.06.11 թիվ 974-Ն որոշում)

(1-ին կետը փոփ. 24.03.11 թիվ 296-Ն որոշում)

2. Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կազմակերպման աշխատանքների կատարումն ու վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության վրա:

3. Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության կիրարկման կարգի մասին հրահանգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրին կից տրվող ռուսերեն ներդիրի ձեւը եւ նկարագիրը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունվարի 13-ի „Նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան եւ ծառայողական անձնագրերի վավերականության ժամկետը երկարաձգելու մասին„ թիվ 8 որոշման (Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 596 որոշման խմբագրությամբ) 1-ին եւ 2-րդ կետերում „1998 թվականի

դեկտեմբերի 31,, բառերը փոխարինել ,,1999 թվականի հուլիսի 1,, բառերով:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի սեպտեմբերի 11-ի ,,Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին,, թիվ 473 որոշումը՝ բացառությամբ 4-րդ կետի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1998 թվականի դեկտեմբերի 25-ից:

(որոշումը փոփ. 31.07.08 թիվ 823-Ն որոշում)

Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

I. Ընդհանուր դրույթներ

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրում կարող են կատարվել հետեւյալ նշումները՝

զ) ազգության մասին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ
18 փետրվարի 2002 թվականի N 138
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
"18" փետրվարի 2002 թ.

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թվականի մարտի 3-ի "Լեզվի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման կարգի մասին" ՆՀ-0774-1 որոշման "գ" կետին

համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագիրը (կցվում է):

Հաստատված է
ՀՀ կառավարության 2002 թ.
փետրվարի 18-ի N 138 որոշմամբ

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺԻՆ 1
ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սույն ծրագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, "Լեզվի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներ եւ իրավական ակտեր, միջազգային համաձայնագրերը:

Ծրագրի բնագավառներն են՝ գրական հայերենի կանոնարկումը, ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրները, կրթության համակարգը, Հայաստան-սփյուռք հարաբերությունները, օտար լեզուների ուսուցման համակարգը, պաշտոնական խոսքը, զանգվածային լրատվության միջոցների լեզուն, հրապարակային գրվածքները, մշակույթի ոլորտը:

Պետականության հիմքերի ամրապնդման, հասարակական կյանքում լեզվական մշակույթի նշանակալի դերի վերապահման, հայկական քաղաքակրթական հարուստ ժառանգության ներկայացման գործում իր ուրույն դերն ունի պետական լեզվական քաղաքականության կանոնակարգված եւ արդյունավետ կիրառումը:

Լեզվական եւ մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը, ազգային փոքրամասնությունների լեզվի ու մշակույթի զարգացման խրախուսումը միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության վարկն ապահովող պայմաններից է:

Ներկայիս համընդգրկման գործընթացների պայմաններում ժամանակակից լեզուների ուսուցումը եւ դասավանդման նորարական մոտեցումների ապահովումը ժողովուրդների համար մշակութային համագործակցության զարգացման էական գործոն է հանդիսանում:

Ծրագրի հիմնադրույթները հանգում են հետեւյալին՝

1. Լեզուն հասարակական երեւույթ է, ուստի պաշտոնական եւ հրապարակային լեզվագործածությունը հասարակության կողմից ենթակա է վերահսկողության: Այն իրականացվում է պետության կարգավորիչ գործառույթներով: Հետեւաբար, լեզվական հարաբերությունների

կարգավորումը պետության մենաշնորհն է եւ իրականացվում է օրենքի հիման վրա, պետական ծրագրով:

2. Հայերենի՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզու լինելու իրողությունն արտացոլում է՝

իր պատմական հայրենիքում պետություն կերտող հայ ազգի ժողովրդագրական գերակշռության իրողությունը.

հայոց ազգապահպան գործոնների շարքում մայրենի լեզվի վճռորոշ դերը.

արդի գրական հայերենի մշակվածության ու միջմշակութային մրցունակության բարձր աստիճանը.

հոգեւոր ժառանգությունը պահպանելու եւ սերունդներին փոխանցելու, համայն հայության ազգային ինքնությունը եւ համազգային միասնականության գիտակցումը

պահպանելու հայերենի պատմականորեն փաստված կարողությունը:

3. Հայաստանի Հանրապետության պետական լեզվի գերակայությունը ներդաշնակորեն զուգակցվում է ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանման, բոլոր մշակույթների նկատմամբ փոխադարձ հարգանքի սկզբունքներին՝ միջազգային իրավունքին եւ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան:

4. Օտար լեզուների իմացությունը միջմշակութային հաղորդակցման միջոց է, որը մեր երկրի հոգեւոր-տնտեսական զարգացման գործում ստանձնում է երկակի դեր. նախ ապահովում է հաղորդակցումը համաշխարհային քաղաքակրթական արժեքներին եւ ապա՝ սեփական արժեքներն աշխարհին ներկայացնելու հնարավորություն է ընձեռում:

ԲԱԺԻՆ 3
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IV. ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1997 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում իրականացնում է "Հայերենը ոչ հայախոսների համար" ծրագիրը:

Ծրագրի նպատակն է արտերկրներից վերադարձող քաղաքացիների, փախստականների, ազգային փոքրամասնությունների եւ առհասարակ հայերեն սովորել ցանկացող անձանց լեզվուսուցումը:

Այս աշխատանքներում գերակա տեղ է հատկացվում արտերկրից վերադարձած դպրոցահասակ երեխաների ուսուցմանը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ազգային փոքրամասնությունների լեզուները Հայաստանի Հանրապետության լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը: Այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավարացման հետագա ընթացքի եւ քաղաքացիական հասարակության զարգացման համար ունի հանգուցային նշանակություն:

2. ՀՀ քաղաքացիների իրավունքները լեզվի բնագավառում երկբնույթ են՝ ազգային եւ հասարակական: Ազգային մակարդակում ապահովվում է մայրենի լեզվի իմացության, դրանով կրթվելու եւ այն գործածելու իրավունքը, հասարակականում՝ պետական լեզվի՝ հայերենի իմացության եւ գործածության՝ ՀՀ բոլոր քաղաքացիների իրավունքն ու պարտականությունը:

3. Որոշ ազգային փոքրամասնությունների ազգային ինքնության պահպանմանը պետականորեն սատարելը շահեկանորեն կարող է ավելի կամրջել մեր երկիրը այդ ժողովուրդների հայրենի պետությունների հետ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համակողմանի աջակցությունն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը:

2. Աջակցությունն ազգային փոքրամասնությունների միջեւ արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան:

3. Մայրենի լեզվով կրթություն եւ դաստիարակություն ստանալու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքի ապահովման նպատակով տվյալ ազգության մտավորականության գիտամանկավարժական ներուժի ներգրավումը:

4. Աջակցությունն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստման եւ վերապատրաստման աշխատանքներին:

5. Ազգային փոքրամասնությունների լեզուների դասագրքերի ստեղծման հնարավորությունների վերլուծությունը եւ հրատարակչական ծրագրի մշակումը:

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ
14 ապրիլի 2005 թվականի N 492-Ն
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ, ԱՅԴ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
"3" մայիսի 2005 թ.

(1-ին մաս)

Ղեկավարվելով "Քաղաքացիական կացության ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձեւաթղթերի լրացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձեւաթղթերի, ինչպես նաեւ քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձեւաթղթերի նմուշները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2005 թվականի ապրիլի 14-ի
N 492-Ն որոշման

ԿԱՐԳ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

11. Քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձեւաթղթերում այլ ազգություն ունեցող քաղաքացիների ազգության մասին գրառում կատարվում է անձը հաստատող փաստաթղթերում համապատասխան նշման առկայության դեպքում: Ծննդյան ակտային գրառման մեջ երեխայի ազգությունը լրացվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:

12. Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում լրացվում են հայրանունների ուղիղ ձեւերը:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am